ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
Հ.186 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևան, Նոր Նորքի 8-րդ զանգված, Մինսկի 95
Հեռ. 66-70-86, 66-72-40
Էլ. փոստ school186@schools.am

N 542

09. 03. 2023 թ

ՀԱՅԱՍԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

Հայտնում ենք Ձեզ, որ Երևանի հ.186 հիմնական դպրոցում առաջացել է երաժշտության ուսուցչի թափուր տեղ:

Թափուր տեղը համալրելու համար «Կրթություն» շաբաթաթերթում հայտարարելու ենք մրցույթ, որը տեղի կունենան 2023 թվականի մարտի 24- ին՝ ժամը 14[30]-ին, Երևանի հ.186 հիմնական դպրոցում:

Կից ներկայացնում ենք հայտարարությունը:

Տնօրեն՝ /Մ. Քոչարյան/

Հայտարարություն

Մրցույթ՝ «Երևանի թիվ 186 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի երաժշտության ուսուցչի / 24 դասաժամ/ տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ-ի մարտի 9-ից մինչև 2023թ-ի մարտի 22-ը ներառյալ, ամեն օր 10:00-ից 15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. մարտի 24-ին՝ ժամը 14:30-ին, Երևանի հ. 186 հիմնական դպրոցում, հասցե՝ ք. Երևան, Նոր Նորքի 8-րդ զանգված, Մինսկի 95:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 010667086, 010667240 հեռախոսահամարներով: